



ՍիաՄանթո

Յոյսին ճամբան

Ու անոնք, հսկայաձեւ ոսկվիրաները մարմարեղէն
Յոյսին,
Ըմբոստացումներու ապառաժներէն իրենց ճակատներն
արիւնած,
Բայց աշուրներնէն անասելի արհաւիրք մը արձակելով
Ու իրենց փշրող ակոսներուն տակ հրաշէկ դանակներ
տրորելէն՝
Աւերակներու քառուղիի մը վրայ, այս իրիկուն
ՏԺգունութեանս հետ երես երեսի, ինծի ըսին.

«Ո՛վ դուն որ քու մատուրներովդ աշուրներդ փորեր՝
Այս ընդվզումի ու խօլ երիվարումներու պահուն
Վճռական փոթորկումներուն անտարբեր՝
Այսպէս շրթունքներդ դէպի Տաւր կարկառած՝
Ու բազուկներդ, պաղատանքի մէջ, յոգնածօրէն դէպի
վեր,
Առաւօտէ առաւօտ ու իրիկուրնէ իրիկուն,
Անշա՛րժ, մեզի համար գոհուածներուն վրայ, եղբօր
մը պէս, բայց վայրապար՝
Քու վէրք դարձած նայուածքներով բոլոր արիւնը
տուիր...

«Օ՛ր նախ քու փորուած բիբերդ անհուն,
Մեր պաշտամունքի ջահերուն դարձո՛ւր,
Ու մտածումովդ մեզի ունկնդրէ,
Գիտենք որ դուն երագող մըն ես ու այլուրներէն
սքափեցար,
Ոգեւարներու աղերսող հոնդիւններէն հրաւիրուած,
Ու իրենց քարուքանդ մարմիններուն գալարանքէն
սարսափահար,
Անոնց վրայ քու երգերուդ թաղմանական հանգիստին
հետ,
Ձեռուրներուդ հանգչեցնող շարժումները տարածելու...

«Բայց նուիրական Յաւը ինքն իր մէջը ձգէ՛,
Ո՛վ դուն, ողջակիզումներու ուխտուած սպիտա՛կ տղայ:
Երբե՛ք պէտք չէ խաղաղութիւնը խռովել ինկածներուն
Եթէ նոյն իսկ նայուածքներուդ արիւնին աղբիւրներովն
ալ ըլլայ:
Ու դուն մտածումովդ այսուիտեւ, յաւերժապէս
Փառքերու ճակատագրին սահմանուած
Աստուածային մարմարներու զանգուածներէն՝
Քու Ձեւերուդ խենթութեանը համեմատ,
Եթէ կ'ուզես, Տառապանքը, դարերուն համար,
քանդակէ՛.
Բայց, մի՛ մոռնար, Անոր աշուրներն ու բերանը ու
հոգին, տարփօրէն,
ընդվզումի ստինքներուն կարկառելու...:

«Ու յետոյ ու մանաւանդ ըլլալու համար ԱՆ՝ որ պէտք
է ըլլալ վերջապէս,
Այս մաքառումի ու ակնկալութեան օրերուն,
Ամբողջ երկիրը, ստուերիդ մէջէն, հոգիիդ հետ,
առանձին,
Հորիզոնէ հորիզոն քալէ՛ դուն,

Աւաններէն, ու դաշտերէն, ու արտերէն անծայրածիր,
Դէպի քաղաքներն, ու գիւղերն, ու հնձաններն հեռաւոր.
Ու քայլիդ վրայ անխոնջօրէն նորէն վերադարձիր,
Եւ մոլեգնաբար Մահը հոտոտէ՛,
Գիտե՛ս որ պէտք է բաղխուիլ անկէ,
Բանալու համար մեծ ճամբաները Յոյսին,
Որպէսզի, վերջապէս, Երագին ձիերը փոթորկանման
Մեր կամքին ձեռուրներէն դիցազնաբար վարուելէն՝
Յաղթանակին կատարները արձանանան...:

«Ու վայրկեան մը մթաստուերին մէջէն,
Եթէ կրնաս, անհունօրէն ետիդ դարձիր,
Ու տես մեռելներու հողէն Ժայթքումն յանկարծական
Որ գերեզմաններուն ու քանդուած քաղաքներուն
տակէն,
Մէկէն ի մէկ փրկութեան ոգումներէն շնչաւորուած՝
Մեր ետեւէն, այս իրիկուն, տենդօրէն ոտքի՝
Դէպի Յոյսին բացաստանները պիտի քալէն:
Ու անոնց հաւատքին հրայրքը նայէ՛ ու սիրտ ա՛ռ,
Տե՛ս իրենց ծանր քարերն ու սեւ խաչերը փայտէ
Հողէն յոգնած ուսերնուն վրայ,
Տե՛ս իրենց պատանքներն իրարու արիւնէ կարմիր՝
Խաւարներու հովերուն տարածած,
Ու տե՛ս, տե՛ս բոլորն ալ մէկ մէկու առջեւ կարծես թէ
ծնրադիր, տե՛ս,
Իրարու համար անգամ մըն ալ մեռնելու երդումները
կ'ընեն...:

«Ու ամէնքն ալ հոն պիտի ըլլան, այսօր, մեզի հետ,
Անոնք որ կոյր են ու անոնք որ անկար,
Ու անոնք որ իրենց վիզերը խելայեղօրէն
Մէկ մէկու հոգիի համար
Դէպի Եղեռնը երկարեցին...:

Ու անոնք ալ որ մեր վարպետներն եղան ընդվզումի,
Որոնց խօսքերը մեր խօսքերն են, այս իրիկուն,
Ու իրենց հոգին մեր պաշտամունքը առ յաւէտ:

«Ու տակաւին ամբոխը կայ անոնց՝ որոնց սարսափին
աղէկ որ շընդհարեցար դուն,
Միայն մենք գիտենք թէ անոնց մարմինները ո՛րչափ
ամենի են,
Ու իրենց աշուրներն ու շարժումները ո՛րչափ ահարկու...
Ու այն արիւնը որ եղբայրներու գլխատումէն իրենց
մտքովն ըմպեցին
Օ՛ր, անոնց գանկերուն մէջը՝ յաղթանակներու ծարաւէն
գինով արծիւներու
Անսահման թեւաբախումները բացաւ...:

«Ու դեռ մայրերը կան, արգասաբեր ու հերարձակ,
Որ վերը, վրաններուն մէջը դաշտավայրին,
Իրենց յուրթի ու լայն ու լուսաւոր կողերուն տակ,
Մեր վաղորդայնները նորէն փառաւորելու համար
Մոլեգին Դիւցազներու կարմիր երկունքը կ'ապրին...:

«Բայց հիմա որ առաւօտը պայծառօրէն մօտեցաւ,
Ու դուն մեր հոգիները ճանչցար,
Ո՛վ երագելէն ոգեվարող եղբայր,
Եկո՛ւր, որպէսզի մեր շրթունքները քու շրթունքներդ
ընդունին
Վայրկեանի մը ու յաւիտենականութեան մը համար...:
Ու դեռ Արիւնին նուիրական պղծումէն չկարմրած՝
Սա՛ փայլակէ սուրը կտրիճօրէն ձեռքդ ա՛ռ,
Ու անով մեր ամէնուն սուրերը սա՛ աստղերուն
մաքրութեանը տակ,
Երդումներուն Երդումը ընելէն խաչաձեւէ՛...
Ու գէթ անգամի մը համար՝ ինքնիրմէդ դուրս

գահավիժելն՝

Եթե կրնաս, մեզի հետ քալե: Ահաւասի՛կ ճամբան»:
